ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝

Դիանա Քարազյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Ստրասբուրգ), 2024թ. հոկտեմբերի 8-ից 11-ը ներառյալ

Հրավիրող կողմը

Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

Գործուղման նպատակը

Գործուղման նպատակն է եղել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Մարդու իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեի (CDDH) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (Կոնվենցիա) կից 15-րդ և 16-րդ Արձանագրությունների նախնական արդյունավետությունը գնահատելու համար ձևավորված աշխատանքային խմբի (DH-SYSC-PRO) երկրորդ հանդիպմանը մասնակցությունը և ՀՀ դիրքորոշման ներկայացումը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2024 թվականի հոկտեմբերի 9-ից 11-ը ներառյալ DH-SYSC-PRO աշխատանքային խմբի հանդիպումներին մասնակցել են ԵԽ 13 անդամ պետություններ: Աշխատանքային խումբը նախագահում էր Նիդերլանդների Թագավորությունը ներկայացնող ներկայացուցիչը: Նշված օրերի ընթացքում քննարկվեցին Կոնվենցիային կից 16-րդ Արձանագրության նախնական արդյունավետության գնահատման վերաբերյալ զեկույցի ամբողջական նախագիծը, որը նախապես պատրաստվել էր աշխատանքային խմբի զեկուցող անդամի կողմից: Զեկույցի նախագծում, ի թիվս այլնի,

արտացոլված էր ՀՀ փորձը[1] Մարդու իրավունքների եվրոպական դատարանից (Եվրոպական դատարան) խորհրդատվական կարծիք հայցելու առումով, որի մանրամասները քննարկվել էին նաև աշխատանքային խմբի առաջին հանդիպման ժամանակ: Զեկույցի նախագծի համար հիմք էր հանդիսացել, ի թիվս այլնի, անդամ պետությունների ներկայացուցիչների, ինչպես նաև խորհրդատվական կարծիք հայցելու հնարավորություն ունեցող ներպետական դատարանների կողմից տրամադրված դիրքորոշումները:

Այնուհետև աշխատանքային խմբի կողմից քննարկվեց Կոնվենցիային կից 15-րդ Արձանագրության արդյունավետության գնահատման վերաբերյալ զեկույցի հիմնական բաղադրիչները, որոնք զեկույցի նախագծի տեսքով աշխատանքային խմբի քննարկմանը զեկուցող անդամների կողմից կներկայացվեն հաջորդիվ: Այնուամենայնիվ, քննարկվեցին 15-րդ Արձանագրությամբ ամրագրված սուբսիդիարության սկզբունքի ազդեցության տենդենցները, այդ առնչությամբ առցանց ձևաչափով դասախոսությամբ հանդես եկավ պրոֆեսոր Միքայել Մադսենը: Աշխատանքային խումբը որոշեց, որ պարոն Մադսենը հաջորդիվ կներկայացնի դոկտրինալ (որակական) հետազոտության արդյունքները:

Աշխատանքային օրերի ընթացքում քննարկվեցին նաև զեկույցի նախագծի այլ դրույթներ, որտեղ ըստ նպատակահարմարության հայկական կողմի կողմից կատարվեցին համապատասխան առաջարկներ և դիտարկումներ: Հանդիպման ավարտին ընդունվեց արձանագրություն, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/drafting-group-on-the-evaluation-of-the-first-effects-of-protocols-no-/1680b1efb6:

Դ. Քարազյան

14.10.2024

[1] ՀՀ Սահմանդրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Եվրոպական դատարան ներկայացված խորհրդատվական կարծիք հայցելու վերաբերյալ դիմումները և այդ առնչությամբ Եվրոպական դատարանի կողմից տրամադրված խորհրդատվական կարծիքները